ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 14.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրության հիման վրա, 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ նախաձեռնել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը շինարարական աշխատանքների գնման դեպքում հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Ընթացակարգի հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները՝ համաձայն հավելված N 1.2-ի:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակում նշված է, որ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության.

1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի մասով պարզվել է հետևյալը.

«Հավելված N 1.2-ի մասով

Ա) 6-7-րդ և 18-24-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

Բ) 14-17-րդ տողերում նշված չեն արտադրող ընկերությունների անվանումները,

Գ) 16-17-րդ տողերով ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգելու համար անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր կամ փոխարինել այլ մոդելով,

Դ) 1-ին, 16-17-րդ, 25-րդ տողերով ներկայացված սարքավորումների տեխնիկական բնութագրերը թերի են լրացված: »

1.2 կետով որոշվել է կասեցնել նիստը և ծանուցել վերը նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում /18.01.2022թ. ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության (կցվում է).

1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով՝ 7-րդ տողով ներկայացված արտադրողը և մոդելը միմյանց չեն համապատասխանում, 19-րդ տողով ներկայացված մոդելը անձնագրային տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին:

1.3 կետի համաձայն՝ որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի հրավերի 1.2 Հավելվածի 7-րդ տողով նշված է եղել հետևյալը՝ Օդահովացուցիչի 22կՎտ, իսկ 19-րդ տողով Ավտոմատ գազային այրիչ 378400ԿԿալ/ժամ:

Ընկերության կողմից հայտով 7-րդ տողով չի ներկայացվել սարքավորման մոդելը, այլ նշվել է միայն արտադրող ընկերությունը՝ Завод ВЕНТИЛЯТОР, որը հանձնաժողովի կողմից ներկայացվել է որպես անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և պահանջվել է նշել մոդելը:

Ընթացակարգի հրավերի 1.2 Հավելվածի 19-րդ տողով նշված է եղել հետևյալը՝ Ավտոմատ գազային այրիչ 378400ԿԿալ/ժամ:

Ընկերության կողմից հայտով 19-րդ տողով չի ներկայացվել սարքավորման մոդելը, այլ նշվել է միայն արտադրող ընկերությունը՝ Ecoflame, որը հանձնաժողովի կողմից ներկայացվել է որպես անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և պահանջվել է նշել մոդելը:

Շտկման արդյունքում Ընկերության կողմից 7-րդ տողով նախատեսված Завод ВЕНТИЛЯТОР սարքավորման համար նշվել է պայմանական մոդել, իսկ 19-րդ տողով փոխվել է արտադրողը՝ Ecoflame փոխարեն նշվել է Lamborgini, քանի որ Ecoflame արտադրության Ավտոմատ գազային այրիչ 378400ԿԿալ/ժամ չուներ մոդել:

Կատարված շտկումը գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է և պարզել, որ 7-րդ տողով ներկայացված արտադրողը և մոդելը միմյանց չեն համապատասխանում, 19-րդ տողով ներկայացված մոդելը անձնագրային տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնա՝ Օրենք) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքաի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1.2 Հավելվածի 7-րդ տողով նշված է եղել հետևյալը՝ Օդահովացուցիչի 22կՎտ, իսկ 19-րդ տողով Ավտոմատ գազային այրիչ 378400ԿԿալ/ժամ: Ընթացակարգի հրավերի 1.2 Հավելվածի 19-րդ տողով նշված է եղել հետևյալը՝ Ավտոմատ գազային այրիչ 378400ԿԿալ/ժամ:

Ընկերության կողմից հայտով 7-րդ տողով չի ներկայացվել սարքավորման մոդելը, այլ նշվել է միայն արտադրող ընկերությունը՝ Завод ВЕНТИЛЯТОР, որը հանձնաժողովի կողմից ներկայացվել է որպես անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և պահանջվել է նշել մոդելը:

Ընկերության կողմից հայտով 19-րդ տողով չի ներկայացվել սարքավորման մոդելը, այլ նշվել է միայն արտադրող ընկերությունը՝ Ecoflame, որը հանձնաժողովի կողմից ներկայացվել է որպես անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և պահանջվել է նշել մոդելը:

Շտկման արդյունքում Ընկերության կողմից 7-րդ տողով նախատեսված Завод ВЕНТИЛЯТОР արտադրության համար նշվել է պայմանական մոդել, իսկ 19-րդ տողով փոխվել է արտադրողը՝ Ecoflame փոխարեն նշվել է Lamborgini:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ ներկայացված շտկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի մասով պարզվել է, որ առկա է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես հայտով ներկայացրած Հավելված 1.2. կետի 7 և 19 կետերով նշված սարգավորումների մասով ներկայացված չեն մոդելները (քանի որ այս կետերի մասով շտկամ արդյունքում է հայտը մերժվել, քննարկման առարկա ենք դարձնում միայն այս մասով տրված շտկումը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի՝ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Տվյալ պարագայում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ի սկբանե 7-րդ և 19-րդ տողով ներկայացված սարքավորումների համար չի նշել տվյալ սարքավորումների մոդելները՝ դրանց բացակայությամբ պայմանավորված:

Ավելին, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից Завод ВЕНТИЛЯТОР արտադրության այլ սարքավորումներով (2-5 տողեր) նույնպես մոդել չի նշվել, բայց անհասկանալիորեն մոդելը պահանջվել է նշել միայն 7-րդ տողով նախատեսված Завод ВЕНТИЛЯТОР սարքավորման մասով:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ 7-րդ և 19-րդ տողով ԲԲԸ-ի կողմից առաջարկվող Завод ВЕНТИЛЯТОР և Ecoflame սարքավորումները չունեն մոդելներ:

Մասնավորապես, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն վերոհիշյալ սարքավորումները առաջարկելիս՝ դիմել է իր սարքավորումներ մատակարարող «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին (վերոհիշյալ ընկերությունների համագործակցության փաստաթղթերը կցվում են)՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն սարքավորումների պարամետրերի վերաբերյալ:

«ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն նախ բանավոր, իսկ այնուհետև գրավոր (գրությունը կցվում է) հայտնել է հետևյալը. ««ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն ՀՀ է ներմուծում տարբեր տեսակի սարքավորումներ, այդ թվում նաև օդափոխության համակարգեր և կաթսայատան սարքավորումներ: Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն հանդիսանում է ռուսական ընկերության՝ «Завод ВЕНТИЛЯТОР» ООО ներկայացուցիչը Հայաստանում: «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից արտադրվող օդահովացուցիչի՝ 22կՎտ, ապրանքատեսակի մասով հայտնում ենք, որ վերոհիշյալ սարքավորումը չունի արտադրական մոդել: Նման արտադրանքներին արտադրական մոդել շնորհվում է «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից պատվիրատուի կողմից (տվյալ դեպքում «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի) համապատասխան արտադրանք պատվիրելու արդյունքում՝ այդ արտադրանքը պատվիրատուին հանձնելիս: Տեղեկացնում ենք նաև, որ համապատասխան պատվերի առկայության դեպքում «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից արտադրվում են նաև հատուկ պարամետրեր ունեցող օդափոխության համակարգեր (վերոհիշյալի վերաբերյալ առկա է տեղեկատվություն նաև ռուսական ընկերության պաշտոնական կայքում, արտատպումը կցվում է): Ինչ վերաբերվում է Ecoflame ընկերության կողմից արտադրվող ավտոմատ գազային այրիչին

(378400ԿԿալ/ժամ), ապա վերոհիշյալ սարքավորումը նույնպես չունի արտադրական մոդել և մոդելավորումը կարող է (բայց ոչ պարտադիր) կատարվել միայն պատվերի հիման վրա արտադրված սարքավորումը պատվիրատուին հանձնելու պահին: Ի հավաստումն վերոհիշյալ փաստերի՝ «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են համապատասխան հարցումներ՝ ուղղված «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ին և Ecoflame ընկերությանը: Պատասխանները ստանալուն պես՝ դրանք կներկայացվեն Ձեզ»:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ որպես թերություն, անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրելով Հավելված 1.2-ի 7-րդ և 19-րդ տողերով սարքավորումների մոդելները չնշելը՝ գործել է ոչ իրավաչափ՝ քանի որ հենց Ընթացակարգի հրավերն է ամրագրել, որ սարքավորման մոդելը նշվում է միայն առկայության դեպքում:

Նման պարագայում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ շտկման արդյունքում առաջացել է բացասական հետևանք, քանի որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն կանգնել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ եթե հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա վերոհիշյալ իրավիճակը վրա չէր հասնի:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության առկայությունը իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ

իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) պահանջը (հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը), ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ում աշխատում եմ մոտ գրանցված 170 աշխատակից և Ցուցակում ներառվելու դեպքում Ընկերությունը ստիպված պետք է գնա աշխատեղերի կրճատմանը, եթե ոչ Ընկերության գործունեության դադարեցմանը, ինչը վերջին հաշվով նաև կարող է վնաս պատճառել պետությանը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:35-ին և 18.02.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 18.02.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոնշված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի նոյեմբերի 19-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10 ծածկագրով Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/49 ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:35-ին և 18.02.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

Հավելված N 1.2-ի մասով

ա) 6-7-րդ, 18-24-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

բ) 14-17-րդ տողերում նշված չեն արտադրող ընկերությունների անվանումները,

գ) 16-17-րդ տողերով ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգելու համար անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր կամ փոխարինել այլ մոդելով,

դ) 1-ին, 16-17-րդ, 25-րդ տողերով ներկայացված սարքավորումների տեխնիկական բնութագրերը թերի են լրացված:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ի 7-րդ տողով ներկայացված արտադրողը և մոդելը միմյանց չեն համապատասխանում, 19-րդ տողով ներկայացված մոդելը անձնագրային տեխնիկական բնութագրով չի

համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության ներկայացուցչի կողմից նիստի ընթացքում հայտնած դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է

անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը <u>հայտով ներկայացնում է</u> շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, <u>մոդելները (առկայության պարագայում)</u>, արտադրողները և երաշխիքային ժամկետները:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից

սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	***Մոդել /առկայության պարագայում /***	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

Հավելված N 1.2-ի մասով

ա) 6-7-րդ, 18-24-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

բ) 14-17-րդ տողերում նշված չեն արտադրող ընկերությունների անվանումները,

գ) 16-17-րդ տողերով ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգելու համար անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր կամ փոխարինել այլ մոդելով,

դ) 1-ին, 16-17-րդ, 25-րդ տողերով ներկայացված սարքավորումների տեխնիկական բնութագրերը թերի են լրացված:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ի 7-րդ տողով ներկայացված արտադրողը և մոդելը միմյանց չեն համապատասխանում, 19-րդ տողով ներկայացված մոդելը անձնագրային տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ սահմանվում է, որ ***մասնակիցը շինարարական աշխատանքների գնման դեպքում <u>հայտով ներկայացնում է</u> իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, <u>մոդելները (առկայության պարագայում)</u>, արտադրողները և երաշխիքային ժամկետները:***

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>***, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովը 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.2-ում մոդելները չներկայացնելու հիմքով, արձանագրելով անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, գործել է Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված N 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերության կողմից հայտով մոդելների չներկայացնելը չի կարող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, քանի որ Ընկերությունը տվյալ դեպքում թույլ չի տվել հրավերով սահմանված պահանջի խախտում:

Վերոգրյալ փաստական հանգամանքներով պայմանավորված՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**